ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

27.10.2023Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-24 ուստարվա առաջի կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Ավարտական աշխատանքների թեմանների հաստատում:
3. Հաղորդում 2023-24 ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում պրակտիկանների կազմակերպման ընթացքի մասին:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը արձանագրեց, որ 2023-2024 ուստարվա I կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները, ըստ ժամանակացույցի, իրականացվելու են ս.թ. հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 4-ն ընկած ժամանակամիջոցում: Նախապես կազմվել են ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման ժամանակացույցները, դրանք քննարկվել են ամբիոններում, այնուհետև մասնակի շտկումներից հետո ներկայացվել են հաստատման: Ժամանակացույցները տեղադրվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայքէջում, դրանց վերաբերյալ իրազեկվել են դասախոսները և ուսանողները:: Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին

տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյան, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-24 ուստարվա առաջի կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրերի կողմից տրված ավարտական աշխատանքների թեմաները: Նա նշեց, որ գիտական ղեկավարների կողմից առաջադրված ավարտական աշխատանքների թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների ղեկավարները նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2023-2024 ուստարվա ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը անդրադարձավ 2023-24 ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում պրակտիկանների կազմակերպման ընթացքին: Նա նշեց, որ նշված ժամանակահատվածում 40 ակադեմիական ժամաքանակով ուսումնական պրակտիկա ունեն «Դիզայն» (ղեկավար՝ Դ. Չիբուխչյան) և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» (ղեկավար՝ Ա. Չիբուխչյան) կրթական ծրագրերի երրորդ կուրսերի ուսանողները, իսկ «Դիզայն» (ղեկավար՝ Շ. Ստեփանյան) և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» (ղեկավար՝ Վ. Գալստյան) կրթական ծրագրերի չորրորդ կուրսերի ուսանողները՝ համապատասխանաբար 80 և 40 ակադեմիական ժամաքանակով: Զեկուցողը նշեց, որ պրակտիկայի ղեկավարների կողմից ներկայացվել են պրակտիկայի ծրագրերը: Պրակտիկան իրականացվում են հաստատված դասատախտակով, ՄԿՊԿ բաժնի մշտական հսկողության տակ: Ուսանողների մասնակցությունը և ցուցաբերած ընթացիկ արդյունքները գոհացուցիչ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուսումնական տարվա I կիսամյակի պրակտիկաների ընթացիկ աշխատանքները գնահատել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ